ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/285

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ Կ. Դրամբյանի (լիազորագիր՝ տրված 15.10.2021թ.),

«Վագա ֆարմ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Հ. Տեր Վարդանյանի (լիազորագիր՝ տրված 29.10.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16274-2021 գրությամբ «Վագա ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.09.2021թ. թիվ 421 գրության հիման վրա, 06.10.2021թ. թիվ 26/26-1/16274-2021

գրությամբ նախաձեռնել է «Վագա ֆարմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Վագա ֆարմ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16274-2021 գրությամբ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և այլ բժշական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Հայտերի բացման ժամկետ է սահմանվել՝ 11.08.2021թ. ժամը 15:00–ն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն:

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովի նիստի 19.08.2021թվականի N4 արձանագրության առաջին կետի համաձայն՝ «Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրեց, որ բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: Ընդունվել է որոշում՝ կողմ–3, դեմ–0: Նշվածի արդյունքում հանձնաժողովը որոշել է մասնակիցներն հրավիրել բանակցությունների գնային առաջարկների նվազեցման շուրջ, որը տեղի է ունեցել 24.08.2021թվականին ժանը 12.00–ին:

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովի նիստի 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշմամբ սահմանվել է հետևյալը.

«Ընդունել ի գիտություն, որ 21.08.2021թ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացվել է հարցման պատասխան, համաձայն որի սույն ընթացակարգի շրջանակներում բժշկական կենտրոնը չի կարող գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում:

Հաշվի առնելով նշված գրությունը, հանձնաժողովը որոշեց 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի թիվ 1 որոշումը մասնակի վերանայել և 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը վերանայել:

Հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժինների մասով գնման ընթացակարգը կասեցնել 1 աշխատանքային օրով և մասնակցին տալ օրենսդրությամբ նախատեսված հնարավորություն՝ առաջարկը շտկելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0»:

Սույն կարծիքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ կառավարության 02.05.2013թվականի N502-Ն որոշման հավելվածի երկրորդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Վերոգրյալից հետևում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով ձեռք են բերվում հետևյալ դեղերը՝

Ա. Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերը, և

Բ. Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ–ի՝ Ընթացակարգով ներկայացված հայտում ներառված դեղերը ընդգրկված են Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում (այսինքն՝ բավարարել են «Գնումների

մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով ձեռք բերման պայմանին), ինչպես նաև ՀՀ տարածք են ներկրվել օրինական ճանապարհով՝ ներկրման հավաստագրի հիման վրա, հետևաբար՝ դրանք ենթակա են եղել իրացման նաև ՀՀ պետական գնումների համակարգով:

Հետևաբար, ՀՀ առողջապահության նախարարության գրության վկայակոչմամբ գնահատող հանձնաժողովի այն պնդումը, թե պետական գնումների ընթացակարգի շրջանակներում բժշկական կենտրոնը չի կարող գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, իրավաչափ չէ: Ուստի, իրավաչափ չէ նաև գնահատող հանձնաժողովի՝ 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի թիվ 1 որոշումը մասնակի վերանայելու և 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը վերանայելու մասին 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

Ավելին, այն, որ հավաստագրի հիման վրա ՀՀ տարածք ներմուծված դեղերը ենթակա են ձեռքբերման նաև ՀՀ պետական գնումների համակարգով, ընդունել է նաև մրցութային հանձնաժողովը հենց իր՝ 19.08.2021թվականի N4 արձանագրության առաջին կետով հայտարարելով, որ «Մասնակիցների ներկայացրած փաստաղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրեց, որ բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: Ընդունվել է որոշում՝ կողմ–3, դեմ–0: Ուստի, «Վագա–Ֆարմ» ՍՊԸ–ն տվյալ ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխանող հայտ. Իսկ այն հանգամանքը, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված գրությունը հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը վերանայել է իր իսկ կայացրած որոշումը, որևէ կերպ չի կարող «Վագա–Ֆարմ» ՍՊԸ–ին պատասխանատվության ենթարկելու, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու հիմք լինել:

Բացի այդ, սույն ընթացակարգը հարուցելու հիմք ծառայած Գնահատող հանձնաժողովի՝ 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը, որով հանձնաժողովը որոշել է 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի թիվ 1 որոշումը մասնակի վերանայել և 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը վերանայել, իրավաչափ չէ նաև այն պատճառով, որ գնահատող հանձնաժողովն իր կայացրած որոշումը «վերանայելու» և դրա փոխարեն այլ որոշում կայացնելու իրավասություն, պարզապես, չունի: Իսկ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Վերոգրյալի հիման վրա, կարելի է արձանագրել, որ «Վագա–Ֆարմ» ՍՊԸ–ն թույլ չի տվել գնման գործընթացի որևէ խախտում ինչը կարող էր «Վագա–Ֆարմ» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք ծառայել:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/285 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ,

ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.09.2021թ. թիվ 421 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկաությունները.

Դեղորայքի և այլ բժշկական նյութերի ձեռքբերման նպատակով 27.07.2021թ. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով մասնակցել է նաև «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով հրավերով նախատեսված տեխնիկական ցուցանիշներին համապատասխանող այնպիսի ապրանքներ, որոնք գրանցված չեն դեղերի պետական գրանցամատյանում, սակայն ներմուծված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված ներմուծման հավաստագրերի հիման վրա: Ընթացակարգի արդյունքում ընկերության հայտը տվյալ չափաբաժիններով գնահատվել է անբավարար և մերժվել: Ընկերությունը նման փաստի առիթով բողոք է ներկայացրել գնումների բողոքներ քննող անձին, սակայն բողոքը չի բավարարվել:

Կից ներկայացնում ենք Ընթացակարգի հրավերի, գրանցամատյանի, գնահատող հանձնաժողովի թիվ 2, 3, 4, 5 և 6 նիստերի արձանագրությունների, Ընկերության հայտի, ԳԲՔԱ-ԼՕ-2021/70 բողոքի որոշման պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/285 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/285 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/285 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վագա ֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.08.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ:

3. «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) հրապարակվել է 26.08.2021թ.:

4. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 29.09.2021թ. թիվ 421 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16274-2021 գրությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.09.2021թ. թիվ 421 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վագա ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.08.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ:

«Վագա ֆարմ» ՍՊԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 26.08.2021թ.:

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 29.09.2021թ. թիվ 421 գրությամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 6 արձանագրությունը, որի համաձայն Ընկերության հայտն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է 25.08.2021թ.՝ արձանագրում եմ, որ «Վագա ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել ***25.08.2021թ***., մինչդեռ Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին ***29.09.2021թ.,*** որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Միևնույն ժամանակ գտնում եմ, որ Ընկերության բողոքի հիման վրա 26.08.2021թ. հրապարակված բողոքի վերաբերյալ հայտարարությունը, համաձայն որի՝ կասեցվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնման գործընթացը, չէր կարող հիմք հանդիսանալ արդեն իսկ 25.08.2021թ.-ին Ընկերության հայտը համապատասխան չափաբաժինների մասով մերժված լինելու վերաբերյալ ի հայտ եկած հիմքերը գրավոր լիազորված մարմնին չուղարկելու համար:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում

իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում, օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար՝ տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Վագա ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16274-2021 գրությամբ «Վագա ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**